# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2012 թվականի նոյեմբերի 12-ին

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված **1.** Հայաստանի Հանրապետության 2004 թվականի նոյեմբերի 9-ի աշխատանքային օրենսգրքի 195-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ և 6-րդ մասերով.

«5. 2013 թվականին պահանջն առաջանալու դեպքում միջին ամսական աշխատավարձ հաշվարկելիս աշխատողի տվյալ ամսվա աշխատավարձի չափին ավելացվում է սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով որոշվող մեծությունը, եթե տվյալ ամիսը 2012 թվականի ամիս է:

6. Սույն օրենսգրքի 195-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված մեծությունը որոշվում է՝

1) մինչև 20 000 դրամ աշխատավարձի դեպքում՝ 7 000 դրամ.

2) 20 000 դրամից մինչև 100 000 դրամ աշխատավարձի դեպքում՝ 7 000 դրամ՝ գումարած 20 000 դրամը գերազանցող գումարի 15 տոկոսը.

3) 100 000 դրամից ավելի աշխատավարձի դեպքում՝ 19 000 դրամ՝ գումարած 100 000 դրամը գերազանցող գումարի 5 տոկոսը:»:

Հոդված **2.** Սույն օրենքը համարվում է ժամանակավոր նորմատիվ իրավական ակտ, և դրանով կատարված լրացումն ուժի մեջ է մտնում 2013 թվականի հունվարի 1-ից և գործելու է մինչև 2013 թվականի դեկտեմբերի 31-ը:

Հայաստանի Հանրապետության
Նախագահ

Ս. Սարգսյան

2012 թ. դեկտեմբերի 8
Երևան
ՀՕ-220-Ն